

ՍԿՄՆԱԿ ԸՆԹԵՐՑՈՂԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԱԿԱԲ ԲԱԿՈՒՑ

ՍԵՎ ՑԵԼԵՐԻ
ՍԵՐՄՆԱՑԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

891.99

01 JAN 2009

P-22

- 22 - 19 NOV 2011
ԱԿՈՆՔԻ ԸՆԹԱՐՅՈՂԻ ԳՐԱԴԱՐԱՆ

19 NOV 2011

ԱԿԱՆԵԼ ԲԱԿՈՒՄԵՑ

Ս Ե Վ Ց Ց Ե Լ Ե Ր Ւ
Ս Ե Ր Մ Ն Ա Ց Ա Ն Ը

Z U h Z

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Բ Ա Տ Ո Ւ Ր Ա Կ Զ
ՅԵՐԵՎԱՆ 1 9 3 6



28.02.2013

Պատ. խմբ. Սիրաս

Տեխ. խմբ. Տ. և աշխանքյան
Մրագրի Հ. Գոլուխանյան

©

Քաղաքական լիտերատուր Կ —1095, Պատվեր 523,
Հրատար. 3686, Տիրաժ 3000
Յերևան, Ա Գուռնի 4

Հանձնված ե արտադրության 1936 թ. ապրիլի 9-ին
Ստորագրված ե ապելու 1936 թ. ապրիլի 15-ին

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

23722-59

АКСЕЛ БАКУНЦ

СЕЯТЕЛЬ ЧЕРНЫХ ПАШЕН
ГИЭ ССР Армения, Эреванъ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

Բակունցը ծնվել է Գորիսում, 1899 թվին։ Նրա
մանկությունն անցել է չքավորության մեջ։ 1905
թվից սովորում է տեղական ծխական դպրոցում,
ապա անցնում է Եջմիածնի ճեմարանը, վորը և ա-
վարտում է 1917 թվին։

1915 թ. ամառը Բակունցը Շուշի «Փալակ»
թերթում մի թղթակցություն գրեց Գորիսի քաղա-
քագլւիսի ու զավառական աղմինստրացիալի դեմ,
վորի համար 34 որ բանտ նստեց։ Հետագայում Բա-
կունցը կոր գյուղում ուսուցչությամբ պարապեց։

Բակունցը շատ լավ ծանոթ լինելով Հայաստանի
գյուղին, իր ստեղծագործությունների մեջ արտացո-
լում և գյուղի կյանքն ու բարքերը։ Նրա աշխատու-
թյունների մեծ մասը գրված են գյուղական կյանքից։

Բակունցը Խորհրդապետական Հայաստանի լավագույն
արձակագիրներից մեկն է։

Առանձին գրքով լույս են տեսել «Մթնաձորը»,
«Հովհաննես Մարչը», «Սկցերի սերմնացանը», «Անձ-
րկը» և «Յեղբարության ընկուզենիները» աշխա-
տությունները։

ՅԵՍ հարցնում եմ Ավագին:
 — Մնամ ե այն վարագույրը...
 — Մնում ե:
 — Իսկ մայլը...
 — Մայրը գեռ հավատում ե:

Հետո բարձրանում ե մի ալլ վարագույր և
 իրենում են արեի շողերով վողողված Արաքսի
 տափարակը, առափնչա դեղնած յեղեգները, վո-
 րոնք հազիվ որորվում են գետի զովից:

Ավագի հետ հասնում ենք հնձած արտերի սահ-
 մանին և նստում միայնակ չինարու տակ: Ըն-
 կերս սրբում ե քրտնած ճակատը և արեից ալ-
 րված աչքերը դարձնում մութ սաղարթի կողմը:
 Ճյուղերի վրա նստել են գեր սարյակներ և
 դաշտային գորշ ճնճղուկներ: Նրանք անհանդը-
 տանում են և թվում ե թե հարցնում են իրար,

թե ինչ մարդիկ ենք, հրացան չկա մեր ձեռքին
կամ քար չենք առնի՞ Ապա հանդարտվում են,
վորովհետեւ ծեր սարլակը հանդիմանում ե նրանց
անտեղի հուզմունքի համար: Այնուամենայնիվ
թուշուները բարձրանում են վերևի ճյուղերի
վրա: Նրանք կորչում են տերևների արանքում
և չի դադարում թուչնալին անհանդիստ զրուցը:

Շոգից և հոգնութիւնից ծանրանում են իմ
կոսկերը և յերբ փակում եմ աչքերս, լուս եմ
հազարավոր գերանդիների խշոց, նույնիսկ հաս-
կերի վայր ընկնելը: Հետո սաստկանում ե այդ
խշոցը, զով ե լինում և լսում եմ բազմաթիվ
նիզակների իրար զարկելը: Աղմկում են յեղեգ-
ները... Յերեկի գետի հունով լեռներից իջնում
և սառը հոսանքը:

Ապա մեկնվում եմ Ավագի կողքին և աղմկող
յեղեգների արանքից նախում Արարատին: Յե-
րեկում ե լեռան մուգ կապուցտ ստվերը, վրան
ձյունի նման սպիտակ ամպ: Յերբ որորվում ե
յեղեգնը, որորվում ե և լեռան կապուցտ ստվերը,
հազիվ նշարելի զողում ե գագաթի սպիտակ
ձյունը, վոր ցուրտ ցոլք ե տալիս շիկացած
ողում:

Ու լիաթոք շնչում եմ դովը, վոր իջնում ե
լեռան բարձր գագաթից, ամպի նման սպիտակ
ձյուներից և այն կապուցտ, ինձ համար հավիտ-
յան անհասանելի ամպերից...

Գետնի կազմ արեկից ճաքել ե: Խոր ճեղքերից
բարձրանում ե խանձված հողի բույր: Մի սարդ
հյուսել ե վոստանը ճեղքի վրա. ծղնոտի ծայրը
մոտեցնում եմ վոստանին և հողի մթին խորքից
դուրս ե վազում քաղցած զազանը՝ բրդոտ մի
սարդ և ամենի արագութիւմը պտույտ ե անում
վոսկեգույն թելերի վրա, անհամբեր փնտոելով
վորսը:

Ծղնոտների արանքում մի սև բզեզ գլորում
և աղբի կոր գունդը: Ահա նա, աղբակեր սկարա-
բելը, այն բզեզը, վորին յեգիպտացիք անվա-
նում ելին սըբազան, վորովհետեւ հավատում
եյին, թե նա յե գլորում յերկրագունդը, ինչ-
պես այս կոր աղբը: Մի ըոպէ նա սկին ե տա-
լիս ծղնոտների մեջ, ապա աղբագունդի հետ
գլորվում հողի ճեղքը:

Յես մատներով տրորում եմ կավը, ամենահին
նյութը, վոր կա այս տափարակում: Քանի վոտ-
քեր, քանի սմբակներ և անիվներ անցել են

այս կավի վրալով, ինչքան և ծեծել ձյունը, և
հողմը, և արել, և անձրել:

Անմոռնչ, հավիտյան համը կայ...

Ահա հեռվում լերսում են ացլիների դորշ
պարիսպները և տների պատերը՝ կառուցված
նույն հին կավից: Արել խանձել ե, քամին և
անձրել պոկել են պարիսպների կատարները,
մի տեղ փոս արել, մի ուրիշ տեղ թողել սրա-
ծալը:

Նստել են կավե հին պատերն այս ընդարձակ
դաշտում, ինչպես չոքած ուղտեր: Նրանցից
մեկը ցցել ե վիզը, մյուսի միայն սապատն ե
լերսում, յերրորդը չոքել ե առաջի վոտքերի վրա,
կարծես հիմա պիտի իջեցնի և հետին վոտքերը:

Գնա մինչև հին Բաբելոն, Երամների աշխարհը,
մինչև Աղի լիճը և Միջագետքի խանձված դաշ-
տերը, ամեն տեղ կտեսնես այս բիբլիական
կավը, մահարձանի պես մի չինար և սրբազն
բգեցներ:

Իսկ այս դաշտում ինչքան արագ են մահա-
նում պարիսպները, յերկաթե անիմները տրո-
րում են բրդոտ սարդերին և արգավանդ կավը
ուռմանում ե նոր սերմերով:

—Վեր կաց, Ավագ, զո՞յն ընկալ...
Նրան անվանում ելին Սեթ և վորովհետու
հայրը վաղուց եր մեռել, կոչում ելին մոր՝ Յե-
րանուհու անունով՝ Յերանի տղա Սեթ և կամ
Յերանի Սեթ:

Կարձ եր հասակը, թե բարձր, թավ եր ձախնը,
թե բարակ և գիտե՞ր նա սրինդ նվազել, սիրել
եր նա մի աղջկա և հենց այդ չինարու տակ
մեղ նման հանգստացել եր նա, յերբ վերադառ-
նում եր Արաքսի ափերի արտերից, — այդ բո-
լորն ինձ չավանդեց իմ ընկեր Ավագը, կամ
գուցե և պատմեց, սակայն իմ հիշողության մեջ
ժամանակը խունացրեց այդ պատմության պայ-
ծառ գույները: Յեկ հիմա յերբ գրում եմ նրա
մասին, փորին չեմ տեսել, իսո իմ ընկերոջ պատ-
մածից հիշում եմ այն, վոր Յերանի Սեթը գյու-
ղի ամենալավ սերմնացանն եր:

Այս կողմերում Արաքսը գարնանը լենում ե
իր ափերից, վարար Ջրերը տիզմ են փոռու-
լայն տափարակի վրա և առափնյա լեղեզնուտ-
ները դառնում են կանաչ կղզիներ: Սերմնացանը
ցանում ե սերմը, յերբ հետ են գնում ջրերը և
գետնին նստում ե թաց տիզմը: Նա հանում ե

վոտքերը, մինչև ծնկները վեր քաշում և փայտա կոտը պարանոցից կախ գնում ե որոր և հավասար քալլերով։ Գնում ե և աջ ձեռքով լիաբուն վերցնում ծանր հատիկները, զո՞ր մի վայրկյան շողում են արեի տակ, ինչպես ճընձուկների յերամը և ծանրությամբ ընկնում հոդի մեջ։

Ահա ալդպիսի սերմնացան եր Սեթը, հողի մշակ։ Ուներ մի մայր, մի հին տնակ, յերկու բարդի, վորի կատարին ամեն տարի ծանոթ արագիլը նորոգում եր բունը և պառավ Յերանի համար բերում գարնան իննդություն, ինչպես մյուս արագիլները գլուղի մնացած տների համար։

Յերբ արագիլը տղմուտ հողերում այլևս գորտ չեր բոնում, ուրեմն հետ ելին գնացել Արաքսի ջրերը և ժամանակն եր, վոր Սեթը կախեր կոտը, սերմ ցաներ, իսկ մայրը յելներ փորելու բակի մարգերը, վորոնց կեսը փշացնում ելին հարևանի հավերը, իսկ սոխի մարգում պառկում եր իր՝ Յերանի կատուն։

...Այս ամենապարզ սպատմությունն ե, ամենից հասկանալին։ Դլուղը դաշնակների թիկուն-

քում, գլուղում գաղանի պատրաստություններ ապստամբության, յերբ հարավից արշավեր կարմիր հեծելազորը։ Անի գիշերներ, բռնություն, վախ, կողոպուտ։ Գիշերներ, յերբ դեպի դիրքերն ելին քշում սովահար մի բազմություն, յերբ դիրքերից հետ ելին փախչում նրանք, վորոնք ուղում ելին քրաինք թափել հողի վրա, արտերը ջրել և ունենալ խաղաղություն իրենց խեղճ խրճիթներում։

Յերբ գլուղում հարավից լսեցին թնդանոթի առաջին վորոտը, և նահանջող թշնամին յետ դարձրեց ձիերի գլուխը, թշնամու թիկունքում պալթեց ապստամբությունը, վորպես արձագանք այն առաջին վորոտի, վոր խրճիթներին ավետեց ապատություն դաշնակցական գերությունից։

Արև եր, ելի արագիլներ կային և յուղատ վայլով արևի աակ շողում եր արգավանդ տիղմը։ Հանկարծ գնդակների տարափ տեղաց լեղեգնուաների կողմը, վորտեղ սպիտակ ձիավորների գեմ ամրացել ելին մի խումբ ապստամբ գլուղացիներ։

Սեթը չոքեց այն չինարու յետեր և վորոտաց նրա հրացանը։ Արշավող ձիավորների վախեցած յերամը շաղ յեկավ, ապա նորից գունդ կազմե-

ցին և թաց հողերի վրայով ձիերը քշեցին դեպի
միայնակ ծառը, վոր սև ստվերը նետել եր տ-
մայի դաշտում:

Յերեկոյան կարմիր հեծելազորը գյուղը մտավ:

Միայն մուս առավոտ, յերբ յեկան և ծանր
թնդանոթները դաշտի բարակ արահետով, յե-
ղեղնլա պատգարակի վրա, ընկերները տուն
բերին սպանված սերմանցանի մարմինը: Նրա
սրունքները մերկ ելին, մի կողքի վրա չորա-
ցած տիղն եր և խանձված արյուն: Յերեսում եր
միայն սառած աչքը, վոր նայում եր անշարժ,
ինչպես գորշ ամպը անհունի խորքից...

Նա արնաքամ սողացել եր թաց հողերի վրա-
յով գեղի յեղեգները, գեղի ջուրը, կոշտ մատ-
ներով չանգուել եր գետինը, ցեխոտել եր մատ-
ները և անդգայության մեջ ցեխոտ մատներով
սեղմել եր թրատված ուսը: Հետո յերեսն ի
վայր թաղվել եր սառը հողում՝ վորպես վոս-
կեհատ սերմ:

Յես նայում ելի մի ցածր գոնակի, վորի յե-
տեր վոչ ձայն կար, վոչ շարժում: Արեամուտին
այնքան բարձր ելին յերեսում բակի յերկու բար-
դիները:
— Յերան հորքուրը վոչ տղայի դիակը տեսավ,

վոչ թաղումը: Յերբ նրան հայանում են, վոր
ահա բերում են, նա ճշով դուրս և վաղում,
բայց մինչև շեմքը չի հասնում... Չորս որ մնում
ե ուշաթափ: Ասում ելին, վոր կմեռնի...

2

Լեռնային գյուղերում ալս շենքը կնմանվեր
հին մարագի: Կտուրին կլիներ կլոր անցք, և
տափակ մղաններով բարձր կալից հարդի տաք
շեղներն ալիք-ալիք կմղաննելին ներս: Հետո
անցքը կփակելին չոր ցախով և մի անտիբա-
կան շուն կծմեռեր հարդի վրա, մարտի վերջին
շունը կցնկներ վեց ապորինի լակոտ, վոր հը-
ղիացել եր ցուրտ աշնանը, ցանկալատի տակ:

Ալդպես կլիներ լեռնային գյուղերում:

Սյա շենքը յեղել և հարթավայրի գյուղի յե-
կեղեցին: Հանել են վարագուրը, սրբերի պատ-
կերները: Դարբինը տարել ե մկրտության քարե
ավաղանը և այժմ կարմրած խոփերը նետում ե
ավաղանի պղտոր ջրի մեջ: Մնացել են քարե
յերեք աստիճանները, վորով իջնում են գետ-
նափոր ակումբը, յերկու պղնձա աշտանակ-
ները, վորոնցից կախում են նավթի լամպեր.
մնացել ե յեղեգնա կտուրը և ջահերի նման
կախված յեղեգները, վոր ճոճվում են, յերբ բա-
ցվում ե դուռը: Ակումբի յեղեգնա կտուրի տակ

ապրում են հին աղամբիները, և յերբ դուրսը
բուք ելինում, նրանք ծվարում են մխից մըգ-
լած նիշերում, այնտեղ, ուր պահում ելին ար-
ծաթյա անոթները:

Նոր նկարներ են զարդարում սպիտակ պա-
տերը և հին կամարների տակ հնչում են նոր
խոսքեր: Այդ գետնահարկ շենքում աղմկում
են լերիտասարդսերնդի զվարթաձայն զրուցները:

Դուան գլխին, քարի վրա առաջին տարին
քանդակեցին մի մուրճ և մի մանդաղ, ներքեւ՝
անպաճուճ գրերով գրեցին՝ «կեցցե»: Այդ ան-
գարդ քանդակից այժմ ցոլում ե առաջին հա-
վատացողների սրբազան պարզությունը, այն
անկըկնելի հմաւքը, վոր ունի սկզբնական
որերի անվարժ վոճը, յերբ նոր մարդը հնի
թանձր խավարից թոշում ե դեպի նոր արշա-
լույս և առաջին հետքերն ե դրոշմում քարերի
վրա, թղթերի վրա և պայծառ խնդությամբ
սկսում ե իր նոր եջը:

Առաջին դրոշները գառնում են սրբություն,
հերոսներն անմահանում են և գալիս են նորոգ
գուսաններ՝ նրանց և այն հերոսական որերի
աեծարման յերգերով:

Յեկ ահա նոյեմբերյան տոներին յեղեգնյա
կտուրով այդ ակումբում յեղավ մի սովորական
դեպք:

Վասկել ելին բոլոր ճրագները և կամարների
տակ դեռ մուլթ եր: Նույնիսկ թվում եր, թե
ճրագների լուսից ավելի յեր թանձրանում խա-
վարը: Լուսավոր եր բեմը և բեմի լուսը հազիվ
եր հասնում առաջին շարքերին, վորտեղ փար-
ալա ցածր նստարանների վրա իրար ելին սեղ-
մվել կանուխ յեկած հանդիսականները:

Դռնակն անդադար բացվում եր, նոյեմբեր-
յան քամին ներս եր փչում, որորվում ելին յե-
ղեգնները և ճրագների լույսը դողում եր: Մար-
դիկ, վորոնք ներս ելին ժանում այդ դռնակ-
ներով, իշնում ելին քարե յերեք աստիճաններով,
նրանք կորչում ելին մութի մեջ, յերեսում ելին
ծխախոտի կրակները, ինչպես գիշերալին լու-
սավոր բգեզներ: Հետո առաջանում ելին դեպի
լույսը:

Սղջիկները զարդարում ելին բեմը: Ի՞նչ կա-
րող ելինել դաշտերում, նոյեմբերյան որերին...
Դեղնավուն փշատերն թփեր, դեռ կանաչ
մասրենու ձյուղեր և դաշտալին արցանզեզներ,
վորոնք ծաղկում են ցըտերի հետ և միայնակ

վայելում աշնան արկը: Աղջիկները դեղնավուն
փշատերեւ թփերից, մասրենու կանաչ ճյուղերից
և աշնան դաշտի ծաղիկներից հյուսել ելին
մանակներ ու պսակներ, բամբակի բացված
կնգուղները հագցրել ելին պսակներին և այդ
ամենը նկարների կարմիր յերիզների հետ հյու-
սած կախել պատերից:

Անկյունում գրոշներն ելին, վորոնք հակումի
ելին կանգնել մի պարզ և արդեն կարմիր մաշ-
ված դրոշակի, վորի վրա նույն անպատճեց
մուրճն եր ու մանգաղը, ինչպես քանդակել
ելին դռան ճակատին: Այդ ապստամբության ա-
ռաջին դրոշակն եր, վոր պարզեց գլուղը, յերբ
հարավից վորոտաց ազատության առաջին թըն-
դանոթը:

Դուռը բաց ելին անում, ներս եր մտնում
նոյեմբերյան քամին, որորվում ելին յեղեգները,
նվազում և ապա բռնկվում եր ճըադների լուսը
և ծփում ելին դրոշակները: Ինչպես ին զին-
վոր, վոր խանձվել ե ահեղ մարտերում, ապըս-
տամբության խունացած դրոշակը կարծես մեղմ
շնչով ավանդում եր վոսկեզոծ նորերին այն
պայծառ որերի դաժան պարզությունը, յերբ
իրեն բարձրացրին հողի մշակները, վորպես

փրկության փարոս և ապստամբության նշան,
ինքը փողփողաց խրճիթների վրա, լսեց գըն-
դակների մետաղաձայն աղմուկը, տեսակ առա-
ջին զոհերի արյունոտ մարմինները և, յերբ
պղնձե փողերը հնչեցին թաղման նվազը, խո-
նարհվեց նրանց գերեզմանների վրա:

Բեմի մարդկանց հետաքրքրության առարկան
այն նոր վարագույրն եր, վոր քաղաքից նվեր
ելին բերել յերկու յերիտասարդ բանվոր: Նրանք
վերեկից ամրացրել ելին վարագույրը, մնում եր
վոր ձգելին պարանը և վարագույրը ծալվեծալ
իջներ: Սակայն այդ հանդիսավոր ըոպեն թողել
ելին վերջը, յերբ կհավաքվելին բոլորը և իրենք,
քաղաքից յեկած յերիտասարդները խոսք կառ-
նելին վողջույնի և կասելին իրենց այդ, ինչ-
պես և մյուս նվերների մասին:

Դոնակը նորից բացվեց, մեկը լուցկի վառեց
քարե աստիճանները լուսավորելու և մի ամբողջ
խումբ իրար հետեւից ներս մտան: Լսվում եր
ծանր կոշիկների զոփիուն. ապա նրանք գուրս
յեկան մթնից և հանդիսականները նրանց մեջ
տեսան մի անծանոթ մարդու, վոր հասարակ
շինել եր հազել և ձմեռալին գլխարկ: Նա խար-
խավելով եր գալիս, վորովհետեւ ներսի տաքից

գոլրշի իեր նստել ակնոցների հաստ ապակի-
ներին:

Մյուսների հետ այդ մարդը բարձրացավ բեմը
և նրանք, վորոնք զրուցում ելին կամարների
տակ, առաջ լեկան ու խիտ նստեցին, այնպես
վոր վերջի շարքերը հաղիվ ելին նշմարվում:
Նա սրբեց ակնոցները և հետաքրքրությանը
նախեց շուրջը: Աղավնիները լուսավոր բեմից
և այդքան մարդկանց աղմուկից անհանգիստ թը-
պըրտացին կտուրի տակ, մի քանիսը ճախրեցին
լուսերի և մարդկանց վրա, ապա կորան ոռութի
մեջ:

Մարդը ժպտաց աղավնիների թպրաոցի վրա,
թէ ջերմություն զգաց և հստակ ձայնով սկսեց
իր պարզ զրուցը:

Լսել եք դուք այն արթուն խոսքը, վոր հո-
սում ե, ինչպես իմաստուն զրուցը, լերք առա-
ջին վայրկանից խոսողն իրեն ե բնեռում բոլո-
րի ուշագրությունը, լերք չկա ինքը խոսողը,
իսկ նրա ճշմարիտ մտքերը մուրճի նման հար-
փածում են և բաղիում խոր դռներ, լերք խոս-
քի մեջ կա անխորտակելի ճշմարտություն, վոր
հարթում ե իր ճանապարհը ուրիշների սրտում
և ուղեղների մեջ, լերքեմն վայրում բարձր մըտ-

քերով և լերքեմն զարմացնում իրերի ու մարդ-
կանց ճշգրիտ ճանաչողությամբ:

Նա խոսում եր այնպես, կարծես պատմում
եր միայն մեկին, այն սրտազին մտերմությամբ,
վոր ունի պատմողը լսողի հանդեպ: Նա պատ-
մում եր այն չարքաշ որերի մասին, վոր ան-
դարձ անցել են, խարեբայության, սուսի, շա-
հագործման, հոգեոր ալլասեռման, ծեծի և բըռ-
նությունների այն ժամանակների, յերք սով
կար, և սուր, և բանտ, և կեղեքում: Յերք
պատմում եր այդ ժամանակներից, շատերը
վերհիշում ելին պատկերներ, վորոնք անջնջելի
դրոշմ ելին դրել նրանց հիշողության մեջ: Ով
քաղց եր հիշում, ով վորդուն՝ վոր անվերադարձ
գնաց պատերազմ, ով հիշում եր իր դառն ապ-
րուսար, յերք բաղխում եր ունկորի դուռը և
ում մեջքի վրա խարազանի հետքերը ցավում
ելին, վորպես հին վերք:

Հետո նա դարձավ ապստամբության որերին,
իբրև միակ լելք, իբրև հոլակապ թոփչք դեպի
ապատությունը, վորպես միակ ճանապարհ, վոր
մարդուն հանեց լուսավոր ափը: Նա հիշատա-
կեց ստեղծագործ աշխատանքը, լերք անապատ-
ները հագենում են ջրից և ուրախանում ե

մարդն իր վոռոքած դաշտերով, յերբ ծուխ է բարձրանում գործարանների ծխնելուզգներից և հերոսը դժվար աշխատանքով հալում ու կոփում է իր կամքը, վորագես ամրակուռ պողպատ:

Նա անսպասելի վերջացրեց... Բոլորովին հանգիստ, առանց ձայնը բարձրացնելու: Մի վայրկյան լուռ մնացին, հետո բարձրացավ ծափերի աղմուկը: Կարծես հազար-հազար աղավնիներ թվարտացին ու թափով ճախրեցին:

Հնչեց լերգը, լեղավ նվագ, ապա նոր վողջույններ, դարձալ զվարթ լերգ, դուրս լեկավ այն լերիտասարդ բանվորը և խոսեց հախուռն ավագունով: Նա թվեց նվերները և ալդ վայրկյանին ծանրությամբ իջավ նոր վարագույրը, վար բերել ելին նրանք գյուղական ակումբի համար:

Զարմանքի ալիքը գնաց մինչև վերջին շարքերը:

Վարագույրի վրա ամբողջ հասակով նկարված եր մի վիթխարի սերմացան, փայտե կոտը պարանոցից կախ, մինչև սրունքները բաց վուտքերով: Լուսի տակ շողում եյին այն վասկեգույն հատիկները, վոր աջ ձեռքով նա շաղ եր տալիս արդավանդ ցելերի վրա:

— Յերանի Սեթն ե...

— Իսկը Սեթը...

— Աչքերը, աչքերը...

— Ես մեր հողերն են... Այ են դամիշները, են մեր լեռը...

Գիտե՞ր ալդ անհայտ նկարիչը Յերանի Սեթին և այս գյուղը նրանց հողերը, — դժվար ետքել: Գուցե նրա համարձակ լերեվակալությունը ազատ ճախրել և լերկնել եր ալդ պատկերը, վորպես ամենից հարմարը գյուղական բեմի համար:

Առաջին ապավորությունը մնաց անջնջելի:

Թեթև ծփում եր վարագույրը, սերմացանը ծալվում եր և ներքից այնպես եր թվում, կարծես քայլում և սերմացանը, և գետի զովից որորվում և լեղեկնուտը: Իսկ խորքում կապուտ մշուշի մեջ հազիվ նշամարելի լերենում եր զույգ Արարատը, ինչպես նոյենքերլան պարզ դիշերներին լերենում և գյուղի կտուրներից:

Յերկու կին, զօրնց աղգական եր պատավ Յերանը և նրա նահատակ վորդին, ջերմ հավատով ընդունեցին ամբողջի կարծիքը, վոր իրոք վարագույրի վրա Յերանի Սեթն եւ Նրանցից մեկը վեր կացավ և փոքրիկ ձեռքը ձոտեցրեց սերմացանի բորիկ վատքերին: Կարծես իր ձեռքի ջերմությունն աղում եր հաղորդել անկեն-

պան պատկերին, իբրև ջինջ սիրո նշան։ Միտւաը,
և մի ուրիշ կին մեղմ հառաչեցին ու լաց լեղան
մեռած սերմանցանի համար։

Այդ գիշեր արցունքը սրբագործեց մի վոսկի
առասպել։

*
* *

Քանի նոյեմբեր անցավ...

Ու դեռ մնում ե այն հողաշեն ակումբը, լե-
ղեգնյա կտուրով, և ծփում ե վարագույրը, և
բոց աչքերով մի սերմանցան սև հողերի վրա
առատությամբ շաղ ե տալիս վոսկի հատիկներ։

Փալիս ե արդեն խուլ մի պառավ, լեզեգնյա
ավելը ձեռքին։ Սըբում ե հատակը, զայրանում
ե աղավնիների վրա, լերբ նրանք նստում են
պղնձյա աշտանակների վրա, վոր դրված են վա-
րագույրի լերկու կողմը։ Նա ավլում ե ակումբի
բակը, ապա նորից ներս ե մտնում և մաքուր
ձեռքով սրբում վարագույրի վոշին։

Յերբ վոչ վոք չի լինում ներսը, պառավ Յե-
րանը հանդարտ զրուցում ե վորդու ոլատկերի
հետ։

Հետո մայրը համբուրում ե վորդու անկենդան
վոտքերը։

*
* *

Փողոցի անկյունում ինձ հանդիպում ե իմ
ընկեր Ավագը։ Յես հարցնում եմ նրան։

— Մնում ե այն վարագույրը...

— Մնում ե։

— Իսկ մժկը...

— Մայրը գեռ հավատում ե...

— Լավ ե, վոր վոչ վոք չի վշրել արդ առաս-
պելը։

Հետո Ավագն ինձ պատմում ե նորություն-
ներ գյուղից և գյուղի մարդկանցից։

Փողոցով անցնում են մարդկանց զորասյու-
ներ, թնդում ե նվազախումբը և լես լսում են
պղնձե փողերի հաղթական յերգը։

Հետո իմ աչքի առաջ հառնում ե մի հաղթան-
դամ սերմանցան, վոր մեր սև ցելերի վրա
ցանում ե վոսկեհատ սերմեր։



ՀՀ Ազգային գրադարան



NL0326713

1936

347

23556

ԳԻՒԸ 30 4.

